

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ  
ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար



Գ. Սահակյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 06.09.2016թ թիվ 36-Ն որոշմամբ

ՍՊԻՏԱԿ 2016Թ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	5
2.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.....	5
2.2. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	7
3. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
3.1. Նախադպրոցական կրթություն.....	14
3.2. Երաժշտական և գեղարվեստի դպրոցներ.....	15
3.3. Մշակույթի տուն.....	16
3.4. Գրադարան.....	17
3.5. Սպիտակի մանկապատանեկան մարզադպրոց.....	17
3.6. <<Սպիտակի բնակարանների սպասարկման գրասենյակ>> ՀՈԱԿ.....	19
4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	20
5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ.....	21
6. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ.....	21
7. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐ.....	27
8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	29
8.1. Քաղաքաշինություն.....	29
8.2. Զբոսայգիներ, ջրահեռացում.....	30
8.3. Էներգամատակարարում.....	32
8.4. Գազամատակարարում.....	34
8.5. Աղբահանություն և սանիտարական մաքրում.....	35
8.6. Համայնքի հողային ֆոնդ.....	35
8.7. Բնության և բնական շրջակա միջավայրի պահպանություն.....	36
8.8. Տրանսպորտ.....	37
8.9. Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ.....	40
8.10. Աղետների ռիսկի կառավարում.....	41
9. ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ.....	41
10. ՍՊՈՐՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ, ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎՏԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	42
11. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	44



## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԶՔԾ-ն համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՔԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը, այն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՔԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Սպիտակ համայնքի 2017-2020 թվականների զարգացման քառամյա ծրագիրը (ՀԶՔԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով գործող «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն փորձագետների կողմից մշակված և ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը», ինչպես նաև վերընտրված համայնքի ղեկավարի ծրագրի դրույթները, նպատակ ունենալով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

